«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ **Մանկավարժական աշխատողի մասնագիտական գիտելիքների ու հմտությունների կատարելագործման անհրաժեշտությունը**

Դաստիարակ՝ Անուշ Աղվանյան

Մանկապարտեզ՝ «Ալավերդի համայնքի Ամալյա Կարապետյանի անվան թիվ 7 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն----------2

2. Հետազոտության նպատակը----------3

3. Տեսական մաս՝ խոսք տեսաբաններից----------4

4. Մանկավարժական աշխատողին ներկայացվող պահանջները-----4

5. Մանկավարժի ընդհանուր նկարագիրը----------9

6. Գործնական մաս՝ պարապմունքի պլանավորում----------12

7. Եզրակացություն----------13

8. Գրականության ցանկ----------14

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

<<Դաստիարակը դաստիարակվողների վրա ազդում է ոչ միայն որոշակի գիտելիքներ տալով նրանց, այլ իր վարքագծով, ապրելակորպով, առօրյա երևույթների նկատմամբ վերաբերմունքով>>

ՄԻԽԱՅԻԼ ԿԱԼԻՆԻՆ

Մանկավարժական գործունեությունն իրենից ներկայացնում է մանկավարժի ինքնազարգացման և ինքնակատարելագործման համար հիմք հանդիսացող հետադարձ արձագանք ակնկալող նպատակային մանկավարժական ներգործություն՝ ուղղված սերնդի կայացմանը, յուրաքանչյուր երեխայի ֆիզիկական, անձնային, ինտելեկտուալ և հուզակամային զարգացմանը:

Մանկավարժական գործունեության խթանի դերում կարող են հանդես գալ արտաքին բնույթի տարբեր դրդապատճառներ, օրինակ՝ սեփական մասնագիտական կարողությունների և նվաճումների մեջ համոզվելու և այսպիսով ինքնահաստատվելու ցանկություն: Դրանք կարող են լինել նաև ներքին բնույթի, օրինակ՝ սեփական գործունեության արդյունքները տեսնելու և գնահատելու, մանկավարժական գործունեության նոր ուղիներ փնտրելու և փորձարկելու անհրաժեշտությունը: Մանկավարժական գործունեության բուն դրդապատճառները գոյանում են մասնագիտության կարևորության գիտակցման հետ մեկտեղ: Դրանք բխում են երեխաների շահերից և ուղղված են նրանց ապագայի կառուցմանը: Միայն այս դեպքում է մասնագիտական գործունեությունն անձնավորվում, երանգավորվում և, կարծես ձեռք է բերում իմաստ: Իմաստավորված մանկավարժական գործունեությունն արդեն դրդում է մասնագիտական ինքնազարգացման և ինքնակատարելագործման:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Ընտրել եմ այս թեման, որովհետև մանկավարժը պետք է յուրաքանչյուր օր զարգացնի իր գիտելիքներն ու հմտությունները և այս հետազոտական աշխատանքը կատարելու ընթացքում, այս թեման ինձ կտա ավելի խորությամբ ուսումնասիրելու հնարավորություն, որպեսզի իմ գործունեության ընթացքում կարողանամ տիրապետել վարպետության բոլոր «գործիքներին»՝ կհետևեմ ձայնիս տոնայնությանը, խոսքի կուլտուրային, դեմքի արտահայտիչ շարժումներին և ժեստերին, որպեսզի իմ մասնագիտական կարողություններն ու հմտությունները, հաղորդակցվելու և համագործակցելու ընդունակություններս զարգացնեմ, որովհետև փոխվում են ժամանակները, փոխվում են մոտեցումները, ինչպես նաև պահանջները, մեթոդիկան էլ քարացած չէ և անընդհատ պահանջում է կատարելագործում, հմտություն,վարպետություն առանց սահմանների . . .

Մանկավարժական գործունեության հաջորդ կառուցվածքային տարրը մանկավարժական գործունեության նպատակն է (ըստ հանրահայտ հոգեբան Ա.Ն Լեոնտևի ձևակերպմամբ)։

1. Նպատակն է նպաստել, զարգացնել և կատարելագործել մանկավարժական աշխատողի փոխադարձ համագործակցության դրական ազդեցությունը սաների կրթության, զարգացման և դաստիարակության որակների բարձրացման վրա։
2. Բարենպաստ պայմաններ ստեղծել սաների լիարժեք սոցիալական զարգացման, դաստիարակության և կրթության համար, ներգրավել ծնողներին՝ ակտիվ մասնակցելու ուսումնադաստիարակչական աշխատանքներին։

Այս հետազոտական աշխատանքի արդյունքում ուզում եմ տեսնել, թե որքանով եմ տիրապետում նորարարական մեթոդներին, պահանջներին, սաներից ակնկալվող վերջնարդյունքներին, կարողունակությունների զարգացման առանձնահատկություններին։

ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ

ԳԼՈՒԽ 1.

Առկա գրականության մեջ բազմաթիվ գիտնականներ ընդգծել են մանկավարժական աշխատողների շարունակական մասնագիտական զարգացման կարևորագույն դերը: Պարլինգ-Հեմոնդը (2017թ.) պնդում էր, որ շարունակական ուսուցումը կարևոր է մանկավարժների համար: Ֆուլանը (2014թ.) ընդգծում էր մանկավարժական անձնակազմի կողմից ժամանակակից կրթության բազմակողմ մարտահրավերներին դիմակայելու համար բազմակողմանի հմտություն ունենալու անհրաժեշտությունը: Բացի այդ, Գասկին (2002թ.) ընդգծում էր հարաբերակցությունը ընդլայնված մասնագիտական գիտելիքների և սաների բարելավված արդյունքների միջև՝ ընդգծելով դաստիարակի զարգացման և սաների հաջողության միջև փոխադարձ կապը: Այս տեսական հիմքն ընդգծում է մանկավարժական աշխատողների մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները զարգացնելու համար հետազոտական ռազմավարությունների նշանակությունը:

ԳԼՈՒԽ 2.

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Ստորև թվարկվում են այն հիմնական տարրերը, որոնցով որոշվում է, թե ինչ պետք է իմանա և կարողանա անել նախադպրոցական տարիքի երեխաների հետ աշխատող յուրաքանչյուր մանկավարժ:

1. Երեխաների համար ստեղծում և պահպանում է ապահով և անվտանգ, առողջ և զարգացնող միջավայր՝ ֆիզիկական և սոցիալական, որտեղ երեխան կարող է բավարարել իր հետաքրքրություններն ու պահանջմունքները: Նա անընդհատ հարստացնում է, ավելի բազմազան է դարձնում այդ միջավայրը՝ օգտագործելով նաև գործունեության ընթացքում երեխաների ստեղծած նյութերը:

2. Պլանավորում և իրականացնում է երեխաների զարգացումը խթանող ուսումնական պլան, որը ներառում է երեխաների ուսումնառության և զարգացման բոլոր ոլորտները, նպաստելով սոցիալական, հուզական, իմացական և ֆիզիկական զարգացմանը։

3. Նպաստում է երեխայի սոցիալական զարգացմանը՝ երեխաների հետ հաստատելով համագործակցային հարաբերություններ և կիրառելով զարգացմանը նպաստող մեթոդներ ու մոտեցումներ։

4. Ընտանիքի հետ ստեղծում և պահպանում է դրական ու արդյունավետ հարաբերություններ։

5. Խրախուսում է երեխային, մղում ավելին անելու՝ դրանով նպաստելով նրա առաջընթացին, զարգացմանը, ինքնավստահությանը, հնարավորությունների լիարժեք բացահայտմանը։

6. Երեխայի գործունեության ակտիվ մասնակիցն է. խաղընկերը, օգնականը։ Դաստիարակում է ոչ թե խոսքով ու քարոզներով, այլ երեխայի հետ խաղում է, շփվում, ապրում է նրա հետ՝ ստեղծելով ազատ գործելու միջավայր և զարգացման ու ինքնադաստիարակման հնարավորություն։

7. Նպաստում է երեխայի ստեղծագործական երևակայության զարգացմանը։

ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Մանկապարտեզի դաստիարակ-մանկավարժին ներկայացվող պահանջները պայմանավորված են անձի կայացման գործընթացում նախադպրոցական տարիքի արժեվորմամբ, նախադպրոցական կրթության նշանակության և մասնագիտական պատասխանատվության գիտակցմամբ: Առանձնահատուկ կարևորվում է նախադպրոցական կրթության ոլորտի մանկավարժի դերը, որը կոչված է իրականացնելու մի շարք կարևորագույն մասնագիտական գործառույթներ՝ երեխաների կյանքի և առողջության պահպանման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը, երեխաների զարգացման և դաստիարակության համար մանկավարժական պայմանների ստեղծումը, ուսումնադաստիարակչական գործունեության կազմակերպումն ու իրականացումը, երեխաների ինքնուրուն (որոնողական, հետազոտական, ստեղծագործական) գործունեության կազմակերպումը, ընտանիքների հետ համագործակցության ծրագրի մշակումը, համատեղ մանկավարժական աշխատանքի կազմակորպումը, փոխադարձ կապի ձևերի ապահովումը, մանկավարժական գիտելիքների տարածումը, ինքնակրթության և մասնագիտական վերապատրաստման համար համապատասխան պայմանների ստեղծումը: Ինչպես տեսնում ենք, նախադպրոցական ոլորտի մասնագետի աշխատանքը բազմաբնույթ է, այն պահանջում է անձնային որոշակի որակների և մանկավարժական հմտությունների առկայություն: Առանձին հատկությունները հաճախ հիմք են հանդիսանում մասնագիտական որակների ձեռքբերման համար, միևնուն ժամանակ վերափոխվում և շտկվում են մանկավարժական կարողությունների ներքո: Մասնագիտական որակները ձևավորվում են մասնագիտական կայացման ընթացքում և կատարելագործվում են անձնային հատկությունների ներքո: Ընդունելով նախադպրոցական կրթօջախի մանկավարժի անձնային և մասնագիտական որակների միասնական բնույթը, փորձենք առանձնացնել դրանք փոխկապակցված կարգով.

- անձնային որակներ՝ մարդասիրություն, բարություն, ազնվություն, լավատեսություն, զսպվածություն, ընկերասիրություն,

- մասնագիտական որակներ՝ սեր և նվիրվածություն երեխաներին, հանդուրժողականություն, անշահախնդրություն, վստահելու, մանկավարժական հաղորդակցական կուլտուրա։

Պլանավորված պարապմունքները չպետք է սահմանափակեն դաստիարակի ստեղծագործական միտքը։ Դաստիարակը անընդհատ պետք է ինքնակրթվի և զարգացնի իր գիտելիքներն ու հմտությունները։ Ժամանակակից կրթական համականգը կառուցված է կրթության շարունակականության սկզբունքով, որն առավել անհրաժեշտ է այսօր՝ հասարակության սրընթաց զարգացման, տեղեկատվության ահռելի հոսքի ժամ առ ժամ տեղի ունեցող փոփոխությունների պայմաններում։ Անընդմեջ կրթությունը դիտարկվում է որպես մարդկային գոյատևման ու կենսակերպի հիմնական ձև և չի ճանաչում տարիք, այն ընթանում է վաղ տարիքից մինչև խոր ծերություն։

Չափորոշչահեն կրթադաստիարակչական աշխատանքներն արտացոլվում են նաև կրթական համալիր ծրագրում։ Ծրագիրը սահմանում է տվյալ տարիքային խմբի կրթության բովանդակության ընդհանրական կառուցվածքը, կանոնակարգային պահերը, ուսումնական տարվա սկիզբը և ավարտը։ Տարիքային խմբերի համալիր ծրագրերում տեղ են գտել մի շարք չափորոշչային պահանջներ, դրանք ներկայացված են տարբեր գործունեության ձևերի բաժիններում։ Այդ չափորշչային պահանջները ներկայացված են <<Տարեվերջին երեխան պետք է կարողանա>> խորագրի ներքո։ Մանկավարժական աշխատողը պետք է պլանավորի ըստ համալիր ծրագրով և վերջնարդյունքներին հասնելու համար նպատակ դնի երեխաների տարիքին համապատասխան։

Խաղ-ուսուցումը մանկապարտեզում ուսումնական պարապմունքների կազմակերպման միակ թույլատրելի ձևն է։

Պարապմունքը հիմնականում պետք է կազմակերպել առավոտյան ժամերին։ Պարապմունքների միջև ընկած ժամանակահատվածում անհրաժեշտ է կազմակերպել ընդմիջումներ՝ ֆիզկուլտ-դադարներ, թարմացնող վարժություններ, աշխուժացնող խաղեր։ Արդիական է և արդյունավետ հատկապես ինտեգրված-թեմատիկ պարապմունքների անցկացումը։ Թեմատիկ ուսուցումը հնարավորություն է տալիս դաստիարակին՝ ծրագիրը կազմակերպել երեխաների համար հետաքրքրություն

ներկայացնող թեմաների, խնդիրների կամ կենսական հարցերի շուրջ։ Այն նպաստում է երեխայի զարգացման մտավոր, սոցիալական, հուզական, ֆիզիկական և գեղագիտական ոլորտների համակողմանի զարգացմանը և չի կենտրոնանում մեկ՝ առանձնացված ոլորտի վրա։ Այսինքն՝ ենթադրում է ուսումնական ծրագրերի տարբեր բաժինների միավորում՝ մեկ հետաքրքիր գաղափար ուսումնասիրելու միջոցով, որի մեջ ամփոփված են տարբեր առարկաներից բովանդակային միավորումներ։ Մանկապարտեզում տարիքային տարբեր խմբերում պետք է պահպանվի պարապմունքների քանակը և տևողությունը։ Մանկապարտեզի դաստիարակը ղեկավարվում է չափորոշչով և ծրագրով, դրանք կենսագործում է պլանավորման միջոցով։ Դաստիարակն իր մեջ պետք է միավորի և՛ դիտողի, և՛ մանկավարժի գործառույթները, որոնք անբաժանելի են միմյանցից։ Իր խմբի երեխաներին դաստիարակը պետք է տեսնի նրանց զարգացման դինամիկայում։ Դաստիարակի արդյունավետ աշխատանքին նպաստում է պլանավորման գործընթացը։

Պարապմունքների ձևի ընտրությունն ըստ բաժինների սահմանում է դաստիարակը՝ ծրագրով նախատեսված թեմային համապատասխան։ Օրինակ, եթե տվյալ թեման կարելի է մատուցել զբոսանքների, էքսկուրսիաների, խաղի կամ խաղ-պարապմունքների ձևով, ապա այդ ընտրությունը կատարում է ինքը՝ դաստիարակը։

Կարևորվում է նաև պարապմունքի տեղի և ժամանակի ընտրությունը, դրանց անցկացման ոչ ավանդական և ավանդական ձևերը։ Այդ պատճառով էլ ծրագիրը նախատեսում է տարբերակված ուսուցման զանազան մոտեցումներ։

Մանկավարժական աշխատանքի կարևորագույն մասն են կազմում դիտարկումներն ու դրանց արձանագրումը։ Բնականաբար հիշում ենք դիտարկման, փաստագրման և ունեցած տվյալների վերլուծության կարևորության մասին։ Այս ամենին զուգահեռ կա նաև մի կարևոր սկզբունք՝ կոնստրուկտիվիզմի սկզբունքը, որի կիրառման դեպքում մենք կունենանք ավելի հավասարի գնահատում։ Զուգահեռ ցուցաբերելով բնական ուսուցման մոտեցումներ՝ մոդելավորում, ընդարձակում, դիպվածային ուսուցում և սատարում, ավելի ու ավելի ռեալ ենք դարձնում գնահատման ճշգրտությունը։ Եթե մոդելավորումը հիմնված է երեխայի հետաքրքրության վրա, դիպվածային ուսուցումը խթանում է գիտելիքների հարստացման գործընթացը և այլն, ապա մենք ունենում ենք հստակ

ղեկավարություն՝ երեխայի ճանաչողական և զգացմունքային աշխարհից, նրա կարողություններից և հմտություններից։ Ուրեմն երեխաների առաջընթացը պարզելու և ուսուցումը արդյունավետ կազմակերպելու համար պետք է կիրառել այս մոտեցումները։

Ինքնակրթությամբ զբաղվելն օգնում է մասնագիտական որակների ձեռքբերմանը, տիրապետում է առավել արդյունավետ մեթոդների, ինչպիսիք են <<ԳՈՒՍ>>-ը, <<Վենի Դիագրամը>>, <<Ջիգսո>>, <<Կոլումբովյան ձու>> մեթոդները։ Մեթոդների ավանդական դասակարգման հիման վրա բաժանվել են երեք խմբի՝ խոսքային, զննական, գործնական։ Նախադպրոցական ուսումնական գործընթացում այսօր առաջատար են համարվում ուսումնական գործնական մեթոդները, որոնց խմբին դասվում են տարատեսակ վարժությունները, փորձերը, փորձարարությունն ու մոդելավորումը։ Վարժություններն իրենց մասնաբաժինն ունեն մտավոր զարգացման մեջ՝ միջնորդավորված ձևով, իսկ փորձերն ու փորձարարությունը երեխային մղում են որոնողական գործունեության. մոդելավորումը համեմատաբար նոր մեթոդ է, որն արտացոլում է օբյեկտի ողջ էությունը՝ մոդելավորման տարրերով՝ օրինակ հեքիաթը՝ սխեմատիկ նկարի ձևով։ Մենք բոլորս ծանոթ ենք ակտիվ ուսուցման կամ ինտերակտիվ մեթոդներին, որոնք համապատասխանում են անհատակողմնորոշիչ ուսուցման սկզբունքներին և համահունչ են նախադպրոցական կրթության ռազմավարությանը։

Մտագրոհին չենք անդրադառնում, պարզ է, որ այն ակտիվացնում է միտքը, իսկ ա՛յ օրինակ <<Խճանկար>> կամ <<Ջիգսոյի>> մեթոդը արդյունավետ է օրինակ տարվա եղանակների առանձնահատկությունների համեմատական վերլուծության ընթացքում։ <<Նկարներով ընթերցանություն>> կամ <<ուղղորդված ընթերցանություն>> մեթոդը սովորեցնում է գուշակել, վերնագրել, արտահայտել կարծիք, լսել միտքը, լսել ընկերներին և այլն։

Ուսումնական գործընթացը մանկապարտեզում կազմակերպվում է երեք ձևով՝ առաջինը դա պարապմունքներն են, մյուսը բավականին արդյունավետ էքսկուրսիան, և հաջորդը՝ բավականին արդյունավետ դիդակտիկ խաղն է։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ

ԳԼՈՒԽ 3.

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Պարապմունքն անց եմ կացրել խմբասենյակում, առավոտյան պարապմունքի ժամին, ազատ և անկաշկանդ միջավայրում։

Բաղադրիչ՝ Ինձ շրջապատող աշխարհ

Խումբ՝ կրտսեր II

Թեման՝ << Ջուր>>

Տևողությունը՝ 25 րոպե

Նպատակները՝

1. Սովորեցնել ջրի հատկությունների և նշանակության մասին, զարգացնել կապակցված խոսքը, զրուցելու կարողությունը և հարստացնել երեխաների բառապաշարը կարծր, գոլորշի բառերով։
2. Սովորեցնել կատարել և զուգակցել հիմնական շարժողական գործողությունները։
3. Զարգացնել մտապահելու, վերարտադրելու և ներկայացնելու կարողություններ։
4. Սոցիալական հույզերի միջոցով սովորեցնել արտահայտել իր վերաբերմունքը շրջապատող աշխարհին։
5. Բացատրել անվտանգության հիմնական կանոնները։

Նյութեր-բնության երևույթների քարտ-նկարներ, պաստառ՝ ջրի շրջապտույտի մասին, թագ՝ կախարդական կաթիլի պատկերով, կախարդական պարկ, էլեկտրական թեյնիկ (գոլորշի ստանալու համար), հայելի (ջրի շրջապտույտը տեսնելու համար), բաժակով լի կաթ և ջուր (համեմատության համար՝ գույն, համ, հոտ), լեգո 2 հատ՝ փորձարկման համար, սառույց (ջրի պինդ վիճակը ցուցադրելու համար)։

Վերջնարդյունքներ-Կպատասխանի հարցերին, կճանաչի բնության որոշ երևույթներ՝ ձյուն, կարկուտ, գոլորշի, ցող և այլն։ Կդրսևորի հոգատար վերաբերմունք բնության նկատմամբ, մեծահասակի հիշեցմամբ կպահպանի անվտանգության կանոնները։

ԸՆԹԱՑՔԸ

Խթանում

1. Բաց հարց-Գուշակեք ի՞նչ կա կախարդական պարկում։

Բոլորի տարբերակները լսելուց հետո, եթե չգուշակեն, առաջարկել հանելուկ, որպեսզի կարողանան գուշակել։

Հանելուկ

Նա ապրում է ամպիկի մեջ,

Երբ ամպիկը լացում է,

Նա իսկույն ցած է իջնում։

(անձրևի կաթիլ)

Երեխաները կփակեն աչքերը և երբ բացեն կտեսնեն թաց՝ անձրևի կաթիլով։

Իմաստի ընկալում

Բացատրել ինչու՞ ենք անվանում կախարդական կաթիլ, որովհետև մեկ դառնում է անձրև, մեկ ձյուն, մեկ կարկուտ, մեկ ցող, մեկ էլ գոլորշիանում է։ Կատարել փորձ, էլեկտրական թեյնիկի օգնությամբ ստանալ գոլորշի և հայելու օգնությամբ տեսնել ջրի շրջապտույտը։ Ջրի շրջապտույտի պաստառի օգնությամբ ցուցադրել ավելի

ընկալելի և մատչելի։ Երեխաների կողմից փորձարկման միջոցով համեմատել ջուրը կաթի հետ, ստուգել համը, հոտը, գույնը։

Բացատրել ջրի երեք վիճակների մասին՝ պինդ, հեղուկ և գազային, ցուցադրել ավելի տեսանելի տարբերակներով։ Խոսել ջրի խնայողության մասին, որ լվացվելու ժամանակ ծորակը երկար բաց չթողնեն։

Ակտիվացնող վարժություն- Երեխաների հետ կատարել անձրևի, կարկուտի (արագ և դանդաղ) թափվող վարժություններ՝ մատների և ոտքերի հարվածներով։

Կշռադատում

Հարցեր

1. Ինչու՞ անվանեցինք կախարդական կաթիլ։
2. Ինչպե՞ս էր ջրի կաթիլը կերպարանափոխվում (անձրև, ձյուն, կարկուտ ցող, գոլորշի)։
3. Ջուրը ե՞րբ գոլորշիացավ, ու՞ր բարձրացավ։
4. Այդ ընթացքը մենք ի՞նչ անվանեցինք (շրջապտույտ)։

Վերջում կատարել երգ-վարժություն լվացվելով և գործողությունները ցուցադրելով։

Այս պարապմունքը դիտարկել են մանկապարտեզի մանկավարժական աշխատողները և մեթոդիստը։ Ըստ նրանց դիտարկման՝ դաստիարակը հասավ իր նպատակներին, կիրառելով հարց-հարցադրումներ և մտագրոհ մեթոդները, երեխաները կարողացան արտահայտել իրենց վերաբերմունքը ջրի խնայողության նկատմամբ, հասկացան, որ ջուրը անսպառ չէ և այն շատ կարևոր է մաքուր և առողջ ապրելակերպի համար։

Երեխաները բավականին աշխույժ էին, հետաքրքրված թեմայի նկատմամբ և պատրաստակամ հրահանգները կատարելու։

Թեման ծրագրային է, բավականին կարևոր, ինքնասպասարկման ոլորտի զարգացման և առողջ ապրելակերպ վարելու համար։

Նպաստում է կուլտուր-հիգիենիկ ունակությունների զարգացմանը, ինչպես նաև կարևորվում է բնության մեջ ջրի դերը։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով ուսուցման գործընթացը նախադպրոցական տարիքում ուղղված է երեխայի անձի զարգացմանը, այն լրացնում է նախադպրոցականի դաստիարակության բարդ գործընթացին, իսկ ուսուցում կազմակերպել առանց ճիշտ մեթոդների ու հնարների, ուղղակի անհնար է: Եվ ուրեմն պարապմունքների կազմակերպումը մեծ վարպետություն է պահանջում մեզնից, ուստի դաստիարակը պետք է անընդհատ զբաղվի ինքնակրթությամբ և կատարելագործի անձնային և մասնագիտական որակները, ուսումնասիրի և հիմնավորի դաստիարակի կերպարը նախադպրոցականի անձի ձևավորման գործընթացում: Երեխային պետք է ներկայանա, որպես հավասարը հավասարի, որն ունի իր սեփական ցանկություններն ու հետաքրքրությունները, նախասիրությունները:

Պլանավորված պարապմունքիս ընթացքում կարողացա հասնել ներածության մեջ դրված նպատակներիս:

Հետազոտական աշխատանքի ավարտին (ընդամենը երեք օրվա դասընթացից), հայտնաբերեցի, որ կարողանում եմ գրագետ օգտվել համակարգչից:

Հետագա աշխատանքների ընթացքում կուզեի դաստիարակներն ուշադրություն դարձնեն իրենց աշխատանքների ճիշտ պլանավորմանը, այդ դեպքում կունենան կազմակերպված աշխատանք և դրական արդյունք:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Նախադպրոցական մանկավարժություն
2. Նախաշավիղ